Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ա. Աբրահամյանը

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2025 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Ալեքսեյ Չիչովը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2025 թ-ի թիվ 12 -Ա որոշմամբ

ՖԻՈԼԵՏՈՎՈ 2025թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

. 3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

. 3

2. ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ
ՈԼՈՐՏՆԵՐԻ)

.

. 7

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025Թ. ԾՐԱԳԻՐԸ

. 23

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ

. 30

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ

. 32

Ներածություն

Ֆիդլետովո համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

ՏԱՊ-ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (Աղյուսակ 1), ոլորտային նպատակները (Աղյուսակ 2):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2025 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (Աղյուսակ 3) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 5), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (Աղյուսակ 4):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2025 թվականի ծրագիրը (Աղյուսակ 6):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 7):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33 որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ համայնքի տեսլականն է՝ Ֆիդլետովո համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, կրթական և մշակութային զարգացած, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2025 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 – ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	18,9	13,5
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1239	1270
Համայնքում տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)		

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	18,9	13,5
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում	Տարվա ընթացքում համայնքի բնակչությանը մատուցված ծառայությունները՝ նախատեսվում է ապահովել հրդեհի անվտանգություն , ջրհեղեղներից և այլ վտանգներից ապահովվում	ոչ վատ լավ,	Ավելի լավ
Ոլորտ 4. Հողօգտագործում			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ	-	-	-

պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 5. Տրանսպորտ			
Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:	Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	Միջին, լավ	Ավելի քան լավ
Ոլորտ 6. Առևտուր և ծառայություններ			
2025թ միջոցառումներ չեն նախատեսվում			
Ոլորտ 7. Կրթություն			
Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:	ՏԻՄ-երի, կրթական հաստատություններին, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը ֆինանսական	միջին լավ	լավ
Ոլորտ 8. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 9. Առողջապահություն			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Տիգիկական կուլտուրա և սպորտ			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	ավելի շատ լավ	լավ, ոչ վատ
Ոլորտ 12. Գյուղատնտեսություն			

Ծրագրերի ներդրման դեպքում ապահովել հեռագնա արտավայրերի բարեկարգում ճանապարհների նորոգում և ջրի ապահովում	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ծառայություններից (վրա)	լավ	լավ
Ոլորտ 13. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից	լավ	Ավելի լավ
Ոլորտ 15. Զբոսաշրջություն			
2025 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 16. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
Ապահովել բնակչության ակտիվ մասնակցությունը ծրագրի իրականացման հարցերում և հանրային լսումներում		լավ	Ավելի լավ քան լավ

2. Համայնքի 2025թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում,	29000.0	
Ընդամենը		29000.0	
Ոլորտ 2. Տրանսպորտ			
1.	Ճանապարհների բարեկարգում ,հանդամիջյան և արոտավայրերի ճանապարհների նորոգում, խաղահրապարակի ավարտական կառուցում	2000,0	
Ընդամենը		2000,0	
Ոլորտ 3. Կրթություն			
1.	Համայնքում միջնակարգ դրոցին տրամադրվող օգնություն	800,0	
Ընդամենը		800,0	
Ոլորտ 6.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	1560,0	
Ընդամենը		1560,0	
Ոլորտ 7.			
2.	Սպանդանոցի կառուցում	50000,0	
Ընդամենը		50000,0	
Ընդհանուրը		83360,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

125 82/ h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Կրթություն			
1.	Գյուղատեխնիկայի ձեռքբերում՝ հոլովակավոր ցաքան, գումաղբցրիչ 5տ, հորատող սարք, պարարտանյութի ցրիչ, կարտոֆիլի կլտիվատոր, հրող թև:	12100,0	
2.	Մանկապարտեզի կառուցում:	256000,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, մատուցված հանրային ծառայություններից - ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 23,1%			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, Համայնքային ծառայողներ	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն չկա
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան

<p>բնականոն գործունեությունը:</p>	<p>1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ 2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը - 3 3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 248 օր</p>	<p>տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>համայնքային ծառայողներ</p>	<p>մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում 5. Ճանապարհների վերակառուցում 6. գյուղատնտեսական արտադրության մեղմացում 7. Մանկական խաղահրապարակի ավարտական կառուցում 8. Կոյուղագծի կառուցում – երկրորդ փուլ</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 9220,0 հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 9 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ 5. Սուբվեբյուջեի ծրագրի բազայի ներդրում</p>			
<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման տարեկան աճ</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Օրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ, համայնքային ծառայողներ</p>	<p>2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում 3.Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում,</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 5 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է</p>			

<p>Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Համայնքապետարանում բնակիչների սպասարկման մեկ պատուհանե սկզբունքի կիրառումը- կիրառվում է 3. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ 4. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 4 անգամ 6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 3 օր</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, Համայնքային ծառայողներ</p>	<p>2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների և մասնագետների առկայությունը</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում 2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում 3. Համայնքի գույքի կառավարման բարելավում 4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում 5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում 6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - բավարար 2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է 3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2 4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է</p>			
<p>Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Հգորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները,</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, Համայնքային ծառայողներ</p>	<p>2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարար են</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Աշխատակազմի աշխատակարգերը և</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2025թ. հունվար –</p>	<p>Համապատասխան ենթակառուցված</p>

<p>առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը բարելավվել են</p>	<ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 5 3. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1 4. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -6 5. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի 	<p>Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>		<p>2025թ. դեկտեմբեր</p>	<p>ածքների , ֆինանսական ռեսուրսների և մասնագետներ ի առկայությունը</p>
---	---	--	--	-------------------------	---

<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային ծրագրերի մշակում և կառավարում 3. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր –առկա է 2. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն –առկա է <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
---	---

<p>Միջանկյալ արդյունք 2. Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 1 3. Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -1 	<p>Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ՏՀԶՎԿ ՀԿ, եռամսյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան ենթակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետներ ի առկայությունը</p>
---	---	---	------------------------------	--	--

Ոլորտ 6. Տրանսպորտ

<p>Ոլորտային նպատակ . Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին ոչ լավ, ոչ վատ</p>
---	---

Ծրագիր 1. Արտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում

<p>Ծրագրի նպատակ. 1. Բարելավել գյուղի արտավայրեր տանող ճանապարհները, դրանք դարձնել անցանելի ցյուղացիների և մեքենաների համար: 2. Անասնապահության զարգացման համար գյուղում ստեղծել</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է գյուղի բնակչությանը անցանելի ճանապարհներով երթևեկելու ծառայության մատուցումը և արտավայրերի հասանելիությունը - 100 %-ով</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ,</p>	<p>2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
---	---	---	-----------------------------------	--	--

բարենպաստ պայմաններ:					
Միջանկյալ արդյունքներ. 1. Գյուղի բնակիչներն առանց խոչընդոտների, ժամանակին օգտվում են հանդամասերից և ճանապարհներին չեն ունենում հավելյալ վառելիքի կորուստ: 2. Բնակիչները չեն կատարում մեքենաների և տեխնիկայի անսարքությունների վերացման ավելորդ ծախսեր:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Բնակիչների բավարարվածությունը վերանորոգված հանդամիջյան ճանապարհների անցանելիության վիճակից - բավականին լավ 2. Ծրագրի իրականացման ժամկետը - պար Բ Ե Բ Բ Բ	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, գյուղի բնակիչներ	Համայնքի ղեկավարի տեղակալ,	2025թ. մարտ – 2025թ. ապրիլ	Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներ
Միջոցառումներ (գործողություններ) 1. Վերահսկել ճանապարհների նորոգման աշխատանքները: 3. Աշխատանքների կատարման ավարտական ցուցանիշների քննարկում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 900.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ծրագիր 2. Ֆիդուցիար համայնքի փողոցների բարեկարգում					
Ծրագրի նպատակ. Ֆիդուցիար համայնքի փողոցները բարեկարգել, վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ֆիդուցիար համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին - 100 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ,	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար են
Միջանկյալ արդյունք 1. Ֆիդուցիար համայնքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Բնակիչների կարծիքը բարեկարգված փողոցների վերաբերյալ - բավականին լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 4ամիս	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները

տարվա բոլոր եղանակներին:					
Միջոցառումներ (գործողություններ) 1. Կազմակերպել մրցույթ; 2. Կնքել պայմանագիր մրցույթում հաղթող շինարարական կազմակերպության հետ; 3. Վերահսկել շինարարական աշխատանքները; 4. Կազմել, քննարկել և հաստատել աշխատանքների կատարման ավարտական ակտը:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ` 2 Ֆինանսավորման աղբյուրը` համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 8.Սոցիալական պաշտպանություն					
Ոլորտային նպատակ. Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ -այո 2. Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից - միջին` լավ, ոչ վատ			
Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին					
Ծրագրի նպատակ. Բարելավել անապահով ընտանիքների հետ տարվող աշխատանքների որակը և հասցեականությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը (հարցումների հիման վրա) - բավականին լավ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսները բավարար են
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1.Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին - միջին` ոչ լավ, ոչ վատ 2. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար,	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2025թ. հունվար – 2025թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են
Միջոցառումներ (գործողություններ) 1. Սոցիալական աջակցության տրամադրման կարգի ընդունում ավագանու կողմից 2. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերում 3. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քննարկում և աջակցության տրամադրում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) Ֆինանսավորման աղբյուրը` համայնքի բյուջեի միջոցներ			

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2025 թվականի N 13-Ա

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴԻՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին **որոշում է**.

- Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:
- Տալ համաձայնություն դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտառաջարկի հաստատման դեպքում Ֆիոլետովո համայնքի 2025 թվականի բյուջեից ծրագրի ընդհանուր արժեքի առնվազն 20%-ի չափով համաներդրում կատարելուն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԶԻԶՅՈՎ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ա. Աբրահամյանը

ՖԻՈԼԵՏՈՎՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2025 թվականի N 14-Լ

ՖԻՈԼԵՏՈՎՈՒ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.02.2025թ. թիվ ԴԽ/14.1/5364-2025 հանձնարարականը և Լոռու մարզպետի աշխատակազմի 18.02.2025թ-ի 01/107.4.2/01424-2025 գրությունը՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԶԻՉՅՈՎ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ա.
Աբրահամյանը

Կ Ա Ր Գ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Ֆիդուցիար համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի (**այսուհետ՝ գրանցամատյան**) վարման հետ կապված հարաբերությունները:
2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Ֆիդուցիար համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:
3. Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:
4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):
5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:
6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:
7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝
 - 1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.
 - 2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
 - 3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.
 - 4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.
 - 5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.
 - 6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.
 - 7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

- 8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.
- 9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.
- 10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.
- 11) 11-րդ սյունակում գրառվում են ` հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.
- 12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
- 13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.
- 14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
- 15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.
- 16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
- 17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.
- 18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.
- 19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.
- 20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

- 21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.
- 22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.
- 23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
- 24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.
- 25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.
- 26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.
- 27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ**

ՍԿՍՎԱԾ Է՝

(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝

(օրը, ամիսը, տարին)

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝ _____ էջից:
(թվով)(տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _____ :
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝

Կ.Տ

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

**«ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ֆիոլետովո համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.

Նախագիծը կրում է ներքին (լոկալ) բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

(օրը, ամիսը, տարին)

_____ համայնքի ղեկավար _____
(համայնքի անվանումը)(համայնքի ղեկավարի անունը, ազգանունը)

ՀՀ քաղաքացի _____ -ից
(անունը, հայրանունը, ազգանունը)

Բնակության և ծանուցման հասցե՝ _____ :

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի (պարոն, տիկին) _____
(համայնքի ղեկավարի ազգանունը)

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Հավաքի վայրը՝ _____
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ _____
3. Հավաքի նպատակը՝ _____
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ _____
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ _____

_____ :

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ _____ մարդ:

7. Հավաքի ընթացքում (ժամը __00-__00) նախատեսվում է երթ՝ _____
(նշել երթուղին)

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝

Ազգանուն, անուն, հայրանուն՝ _____,

Անձնագիր՝ _____, տրված __.__.20__, __-ի կողմից,

Հեռախոս՝ _____, Փոստային հասցե՝ _____ ՀՀ,
_____, Էլեկտրոնային հասցե՝ _____
_____:

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ (լրացնել եթե հավաքի ղեկավարումը հանձնարարվել է այլ անձի)

Ազգանուն, անուն,
հայրանուն՝ _____
_____, Անձնագիր՝ _____, տրված __.__.20__, ____-ի կողմից, Հեռախոս՝ _____
Փոստային հասցե՝ _____ ՀՀ, _____ Էլեկտրոնային հասցե՝ _____
_____:

Խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը:

2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով:

Առդիր՝ հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը՝ -- թերթ:

Հավաքի կազմակերպիչ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2025 թվականի N 15-Ա

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՊԱՆԴԱՆՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Ֆիլետովո համայնքի ավագանին *որոշում է*.

Տալ համաձայնություն Ֆիլետովո համայնքում սպանդանոց կառուցելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԶԻԶՅՈՎ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ա. Աբրահամյանը